Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն

ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն

Ելենա Մանուկյան

Երևան - 2010

ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

Գերմանական տեխնիկական համագործակցության ընկերություն

1. Վճարային հաշվեկշիռը. կազմման հիմնական սկզբունքները

- **Վճարային հաշվեկշիռը (ՎՀ)՝** վիճակագրական հաշվետվություն է, որտեղ համակարգված տեսքով արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանում (եռամսյակ, տարի) ՀՀ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև իրականացվող բոլոր տնտեսական գործառնությունները:

- Այդ գործառնությունները իրականացվում են.

✓ ապրանքների և ծառայությունների հոսքերի տեսքով,

✓ եկամուտների հոսքերի տեսքով,

✓ անհատույց փոխանցումների տեսքով,

✓ կապված են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հետ:

- ՀՀ վճարային հաշվեկշիռը 2006 - 2009թթ. համար (մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	2006	2007	2008	2009
Ընթացիկ հաշվի մնացորդ	**-117.1**	**-589.3**	**-1,381.8**	**-1,341.6**
Ապրանքներ	-895.9	-1,600.3	-2,663.5	-2,094.9
Ծառայություններ	-130.4	-212.5	-327.1	-266.1
Եկամուտներ, զուտ	215.2	278.8	471.2	212.4
Ընթացիկ տրանսֆերտներ, զուտ	694.0	944.8	1,137.6	806.9
Կապիտալի և ֆինանսական հաշիվ	**132.9**	**591.5**	**1,369.3**	**1,343.9**
Կապիտալի հաշիվ	86.4	142.8	148.9	89.1
Ֆինանսական հաշիվ	46.5	448.7	1,220.4	1,254.8
Զուտ սխալներ և բացթողումներ	**-15.8**	**-2.2**	**12.5**	**-2.3**
Փոխարժեք (ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար, միջին)	416.0	342.1	306.0	363.3

- ՀՀ վճարային հաշվեկշիռը կազմում է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը՝ հիմք ընդունելով ՀՀ մաքսային վիճակագրության, ՀՀ ԿԲ, ՖՆ, ԷՆ, բանկային և ֆինանսական համակարգերի, կազմակերպություններում և տնային տնտեսություններում իրականացված վիճակագրական հետազոտությունների տվյալները:
- Որոշ ցուցանիշներ (ապահովագրական վճարներ, ՀՀ ռեզիդենտ ճանապարհորդների ծախսերն արտասահմանում) ստացվում են գնահատականների միջոցով, ինչն իրականացվում է ԱՄՀ մեթոդաբանությամբ:
- Որպես ՎՀ վիճակագրության միջազգային ուղեցույց ներկայումս օգտագործվում է ԱՄՀ կողմից մշակված ՎՀ ձեռնարկի 5-րդ հրատարակությունը:

- ՎՀ-ի կազմման կարևորագույն սկզբունքը՝ **ռեզիդենտությունն** է:
- ՎՀ-ի **կրկնակի գրանցման** սկզբունքի համաձայն յուրաքանչյուր գործառնություն գրանցվում է կրկնակի՝ որևէ հոդվածի կրեդիտում և մեկ այլ հոդվածի դեբետում:

Գործառնություն	Կրեդիտ (+)	Դեբետ (-)
Ապրանքներ և ծառայություններ	Արտահանում	Ներմուծում
Եկամուտներ	Ստացված	Վճարված
Տրանսֆերտներ	Ստացված	Տրված
Կապիտալի և ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	Արտաքին ակտիվների (պահանջների) **նվազում** Արտաքին պարտավորությունների **աճ**	Արտաքին ակտիվների (պահանջների) **աճ** Արտաքին պարտավորությունների **նվազում**

- Տեսականորեն կրեդիտային և դեբետային գործառնությունների գումարը պետք է հավասար լինի զրոյի: Գործնականում առաջացող տարբերությունն արտացոլվում է ՎՀ «Զուտ սխալներ և բացթողումներ» բաժնում:

2. Վճարային հաշվեկշռի կառուցվածքը

- ՎՀ-ի գործառնությունները դասակարգվում են **ընթացիկ հաշվի** գործառնությունների և **կապիտալ և ֆինանսական հաշվի** գործառնությունների:
- Ընթացիկ հաշվի գործառնությունները կապված են ապրանքների, ծառայությունների, եկամուտների հետ (ընթացիկ տրանսֆերտները դիտարկվում են որպես եկամուտների վերաբաշխում):
- Կապիտալ և ֆինանսական հաշվի գործառնությունները կապված են ներդրումային գործունեության հետ և իրենցին ներկայացնում են գործառնություններ՝ կապված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հետ:

2.1 Ընթացիկ հաշիվ

- **Ընթացիկ հաշիվը** բաղկացած է.
  - ✓ ապրանքների (առևտրի) հաշվեկշռից,
  - ✓ ծառայությունների հաշվեկշռից,
  - ✓ եկամուտների հաշվեկշռից,
  - ✓ ընթացիկ տրանսֆերտներից:

Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ

- **Ապրանքների (առևտրային) հաշվեկշիռը** իրենից ներկայացնում է ապրանքների արտահանման և ներմուծման տարբերությունը: Արտահանման և ներմուծման գրանցումը ՎՀ-ում կատարվում է, երբ տեղի է ունենում սեփականության իրավունքի փաստացի փոխանցում ռեզիդենտներից ոչ ռեզիդենտներին: Գործարքը գրանցվում է շուկայական գնով:
- **Ծառայությունների հաշվեկշռում** արտացոլվում են բոլոր ծառայությունները, որոնք մատուցվում են ռեզիդենտների կողմից ոչ ռեզիդենտներին և հակառակը:

  Նման ծառայություններին են դասվում տրանսպորտային, ապահովագրական, կապի, ֆինանսական ծառայությունները, տուրիզմը և այլն:
- Առևտրային հաշվեկշռի և ծառայությունների հաշվեկշիռների գումարը կազմում է **ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռը**:

Եկամուտների հաշվեկշիռ

- **Եկամուտների հաշվեկշիռն** արտացոլում է բոլոր այն գործառնությունները, որոնք կապված են ոչ ռեզիդենտներին տրված (ոչ ռեզիդենտներից ստացված) արտադրական գործոնների (աշխատուժ, կապիտալ, հող) դիմաց ստացված (տրված) եկամուտների հետ:
- **Եկամուտների հաշվեկշիռը** բաժանվում է երկու խոշոր ենթահոդվածների.

✓ **Աշխատուժի դիմաց ստացված (տրված) եկամուտներ**, որտեղ արտացոլվում են արտասահմանում ժամանակավորապես աշխատող ռեզիդենտների աշխատանքի դիմաց ստացված եկամուտը (օրինակ, սեզոնային կամ սահմանային աշխատողի աշխատավարձ) և տվյալ երկրում ժամանակավորապես աշխատող ոչ ռեզիդենտներին տրված եկամուտները:

✓ **Ներդրումներից ստացված (տրված) եկամուտներ**, որտեղ արտացոլվում են օտարերկրյա ֆինանսական ակտիվներից ստացված (ակտիվների դիմաց տրված) եկամուտները, որոնք տրվում են (վճարվում են) ոչ ռեզիդենտների կողմից ռեզիդենտներին և հակառակը: Ռեզիդենտների կողմից ստացված ներդրումային եկամուտների օրինակ է ոչ ռեզիդենտ բանկում ունեցած ավանդի դիմաց ստացված տոկոսավճարը (դիվիդենտը և նման այլ եկամուտները):

Տրանսֆերտներ

- **Տրանսֆերտ** է համարվում այն տնտեսական գործառնությունը, որի ժամանակ մեկ երկրի տնտեսվարող սուբյեկտը անհատույց կարգով մեկ այլ երկրի տնտեսվարող սուբյեկտին է տրամադրում ապրանք, ծառայություններ, ակտիվներ կամ սեփականության իրավունք:
- ՎՀ-ում տարանջատում են **ընթացիկ** և **կապիտալ** տրանսֆերտներ հասկացությունները:

✓ **Ընթացիկ տրանսֆերտները** (օրինակ, մարդասիրական օգնություն, ֆինանսական օգնություն) մեծացնում են տվյալ երկրի տնօրինվող եկամուտները, հետևաբար կարող են ավելացնել ինչպես երկրում ապրանքների և ծառայությունների սպառման, այնպես էլ խնայողությունների մակարդակները:

✓ **Կապիտալ տրանսֆերտները** գրանցվում են կապիտալ և ֆինանսական հաշվի՝ կապիտալի հաշվում:

Տրանսֆերտներ

- **Ընթացիկ տրանսֆերտները** դասակարգվում են պետական և մասնավոր տրանսֆերտների:

✓ **Ընթացիկ պետական տրանսֆերտներին** դասվում են երկրի կառավարությանը տրվող մարդասիրական օգնությունը, ֆինանսական օգնությունը (կրեդիտ), ինչպես նաև տվյալ երկրի կառավարության կողմից միջազգային կազմակերպություններին տրվող անդամակցության վճարները (դեբետ):

✓ **Ընթացիկ մասնավոր տրանսֆերտները** հիմնականում ձևավորվում են դեպի արտասահման ուղարկվող և արտասահմանից ստացվող բնակչության դրամական փոխանցումներով:

2.2 Կապիտալի և ֆինանսական հաշիվ

- **Կապիտալի և ֆինանսական հաշիվը** արտացոլում է արտաքին աշխարհի նկատմամբ տվյալ երկրի ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը:
- **Կապիտալի և ֆինանսական հաշիվը** ներառում է կապիտալ հաշիվը և ֆինանսական հաշիվը:
- Կապիտալ հաշվում գրանցվում են այն բոլոր գործառնությունները, որոնք կապված են հիմնական միջոցների սեփականության իրավունքի փոխանցման հետ:
- Կապիտալ հաշիվը կազմված է **կապիտալ տրանսֆերտներից** և **ոչ արտադրական ոչ ֆինանսական ակտիվների հետ կապված գործառնություններից**:

Կապիտալի հաշիվ

- **Կապիտալ տրանսֆերտները** այն տրանսֆերտներն են, որոնք կապված են հիմնական միջոցների սեփականության իրավունքի փոխանցման, պարտքի ներման հետ:

  Դրամական միջոցների անհատույց փոխանցումը կապիտալ տրանսֆերտ է համարվում միայն այն դեպքում, երբ այն նախատեսվում է **հիմնական միջոցների** ձեռք բերման կամ **կապիտալ շինարարության** իրականացման նպատակով:

  Կապիտալ տրանսֆերտների հոդվածում գրանցվում է նաև տվյալ երկրից մշտական բնակչության մեկնած և ռեզիդենտից ոչ ռեզիդենտ կարգավիճակի անցած քաղաքացիների անձնական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը:

- **Ոչ արտադրական և ոչ ֆինանսական ակտիվների հետ կապված գործառնություններն** են հեղինակային իրավունքը, պատենտները, ապրանքանիշերը, արտոնագրերը և այլն:

Ֆինանսական հաշիվ

- **Ֆինանսական հաշվում** արտացոլվում են արտաքին աշխարհի հետ կատարվող այն բոլոր գործառնությունները, որոնց արդյունքում տեղի է ունենում ռեզիդենտների արտաքին ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխություն:
- Փոփոխությունները, որոնց կապված են ակտիվների և պարտավորությունների վերագնահատման, դրանց վերադասակարգման հետ ՎՀ-ում չեն արտացոլվում:
- Ֆինանսական հաշվի շրջանակներում ըստ յուրաքանչյուր ակտիվի գործառնությունները գրանցվում են զուտ ձևով, այսինքն գրանցումներն արտահայտում են որոշակի ժամանակահատվածի ընթացքում տվյալ տեսակի ակտիվի կամ պարտավորության բոլոր գարծառնությունների զուտ գումարային փոփոխությունը:
- Ակտիվների զուտ գումարային նվազումը կամ պարտավորությունների զուտ գումարային աճը կրեդիտագրվում է, իսկ ակտիվների զուտ գումարային աճը կամ պարտավորությունների զուտ գումարային նվազումը դեբետագրվում է:

Ֆինանսական հաշիվ

- **Ֆինանսական հաշվի** ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են ըստ իրականացման նպատակների և ստորաբաժանվում.
  - ✓ ուղղակի ներդրումների,
  - ✓ պորտֆելային ներդրումների,
  - ✓ այլ ներդրումների և
  - ✓ պահուստային ակտիվների փոփոխության հոդվածների:

Ուղղակի ներդրումներ

- **Ուղղակի ներդրումները** ցույց են տալիս մի երկրի իրավաբանական և ֆիզական անձանց (ուղղակի ներդրողի) կողմից իրականացված այն ներդրումները, որոնք **նպատակ** են հետապնդում **մասնակցել** մեկ այլ տնտեսվարող սուբյեկտի գործունեության **կառավարմանը** (ուղղակի ներդրումներով ձեռնարկություն):
- Որպես ուղղակի ներդրում դիտվում է ուղղակի ներդրողի ոչ միայն ձեռնարկության կապիտալում մասնակցության ձևով ներդրումը, այլ ցանկացած այլ ներդրումը, օրինակ, ուղղակի ներդրողի կողմից ուղղակի ներդրմամբ ձեռնարկությանը տրամադրվող վարկերը:
- Ուղղակի ներդրումները ՎՀ-ում գրանցվում են որպես արտերկրներում իրականացված ուղղակի ներդրումներ և հաշվետու երկրում իրականացված ուղղակի ներդրումներ: Միևնույն ժամանակ պորտֆելային և այլ ներդրումների գրանցումը կատարվում է ըստ ակտիվային և պասիվային գործառնությունների:

Պորտֆելային ներդրումներ

- **Պորտֆելային ներդրումներ** են համարվում բաժնետոմսերի և պարտքային արժեթղթերի ձևով իրականացված ներդրումները, որոնց **նպատակն է եկամտի ստացումը:**
- Պորտֆելային ներդրումների և ուղղակի ներդրումներից տարանջատման պայմանական չափանիշ է հանդիսանում ներդրողի կողմից ձեռնարկության բաժնետոմսերի մինչև 10 % տնօրինումը:
- Պորտֆելային ներդրումները դասակարգվում են ըստ ակտիվային և պասիվային գործառնությունների, ինչպես նաև ըստ ֆինանսական գործիքների (կապիտալում մասնակցություն ապահովող արժեթղթեր և պարտքային արժեթղթեր):

Այլ ներդրումներ

- **Այլ ներդրումները** նույնպես դասակարգվում են ակտիվային և պասիվային գործառնությունների և ընդգրկում են առևտրային և բանկային վարկերը, կանխիկ արտարժույթը, ավանդները և այլ ակտիվներն ու պարտավորությունները, որոնք ընդգրկված չեն նախորդ հոդվածներում:
- Այս հոդվածում արտացոլվում են ինչպե՛ս կառավարության, ԿԲ, այնպես էլ մասնավոր հատվածի կողմից ներգրավված ավանդները, ոչ ռեզիդենտների հետ բանկային համակարգի կողմից կատարված բոլոր գործառնությունները (բացառությամբ ֆինանսական ծառայությունների, որը գրանցվում է ընթացիկ հաշվի ծառայությունների բաժնում):

Պահուստային ակտիվների փոփոխություն

- **Պահուստային ակտիվների փոփոխությունը** իրենից ներկայացնում է համախառն արտաքին ակտիվների փոփոխությունը հաշվետու ժամանակահատվածում ըստ առանձին բաղադրիչների.

✓ ոսկի,

✓ հատուկ փոխառության իրավունքներ ԱՄՀ-ում,

✓ ԱՄՀ-ում պահուստային դիրք,

✓ այլ արտարժութային ակտիվներ:

- Առավել հանգամանորեն «ՀՀ ներդրումային դիրքը» մասում: